

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՄԻ ՔԱՆՆԻ ՀԱՐՑԵՐ**

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՍՄԿԿ XXVI Համագումարին Կենտկոմի ալիած հաշվետու ղեկուցման մեջ նշվում է, որ «մեր սոցիալական ծրագրում... կարևորագույն տեղ է գրավում բնակարանը... անցյալ հնգամյակում բնակարանային շինարարությունը իրականացվում էր հսկայական թափով: Երկրում նրա ծավալները կապահանջին նաև այսուհետև: Միևնույն ժամանակ մենք գիտենք, որ ղեռն ոչ քիչ ընտանիքներ են ապրում կոմունալ, անբարեկարգ բնակարաններում, տարիներով բնակարանների են սպասում շատ նորապսակներ»¹: Վերջին հանգամանքը հատկապես բնորոշ է Հայկական ՍՄՀ-ին, որտեղ բնակչության խտությունը 1982 թ. վերջին 9 անգամ գերազանցում էր միջին միութենական ցուցանիշը և կազմում 108 մարդ 1 կմ²-ում, փոքր ինչ զիջելով միայն Մոլդավական ՍՄՀ-ին²:

Աղյուսակ № 1

ՍՄՀՄ և Հայկական ՍՄՀ բնակչության թվի
և խտության դինամիկան 1966—1981 թթ. (‰-ներով)

Բնակչության թվի և խտության դիտարկվող ցուցանիշներ	ՍՄՀՄ ³		Հայկական ՍՄՀ ⁴	
	1966 թ.	1981 թ.	1966 թ.	1981 թ.
ամբողջ բնակչությունը	100,0	115,0	100,0	139,3
այդ թվում՝ քաղաքային	100,0	136,5	100,0	164,4
քաղաքային բնակչության տեսակա- բար կշիռը ամբողջի մեջ	53,5	63,3	56,2	66,4
բնակչության խտությունը (1 կմ ² /մարդ)	10,4	12,0	75,1	104,7

Դիտարկելով հանրապետության քաղաքների և քաղաքային բնակավայրերի բնակարանային ֆոնդի (աղյուսակ № 2) և քաղաքային բնակչության թվաբանակի հավելածի (աղյուսակ № 1) հարաբերակցությունը, տեսնում ենք, որ վերջին երեք հնգամյակների ընթացքում առկա էր Հայկական ՍՄՀ քաղաքային բնակարանային ֆոնդի աճի գերազանցման միտում (1,6 անգամ) քաղաքային բնակչության թվաքանակի աճի հանդեպ, որը սակայն զիջում է ՍՄՀՄ-ի համար հաշվարկված նույնատիպ ցուցանիշին (2,1 անգամ):

¹ «ՍՄԿԿ XXVI Համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 97:

² «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1982, с. 12.

³ Հաշվարկված է «Народное хозяйство СССР в 1980 г.» (М., 1981) ժողովածուի 7 և 8-րդ էջերի տվյալների հիման վրա:

⁴ Հաշվարկված է «Народное хозяйство Армянской ССР в 1980 г.» (Ереван, 1981) ժողովածուի 3-րդ էջի տվյալների հիման վրա:

ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ քաղաքային բնակարանային ֆոնդի
դարգացումը 1965—1980 թթ. (%-ներով)⁵

	1965 թ.	1980 թ.
ՍՍՀՄ	100,0	177,7
Հայկական ՍՍՀ	100,0	201,7

1922—1981 թթ. ընթացքում ՍՍՀՄ քաղաքային բնակչությունն աճել է 7,8 անգամ, իսկ քաղաքային բնակարանային ֆոնդը՝ 12,3 անգամ (այդ թվում հանրայնացվածը՝ 22,2 և քաղաքացիների անհատական պատկանելիության ֆոնդը՝ 5,2 անգամ)։ Հայկական ՍՍՀ քաղաքային բնակչությունը նշված ժամանակամիջոցում աճել է 16, իսկ քաղաքային բնակարանային ֆոնդը՝ 25 անգամ (այդ թվում հանրայնացվածը՝ 88 և քաղաքացիների անհատականը՝ 12,6 անգամ)։ Միութենական և հանրապետական նշված ցուցանիշների աճի տեմպերի ծայրահեղ անհամամասնականությունը հանգեցրեց այդ ցուցանիշների ներկայիս փաստացի հարաբերակցության էական տարբերությանը։ Այսպես, ընդհանուր առմամբ ՍՍՀՄ-ում բնակչության ընդհանուր թվաքանակը 1980 թ. հունվարի 1-ը համեմատելի է 1922 թ. հունվարի 1-ի դրությամբ ՍՍՀՄ մեկ բնակչի միջին բնակարանային ապահովվածությունը կազմում էր 13,7 մ² ընդհանուր տարածություն⁷, այդ թվում քաղաքների և քաղաքային բնակավայրերի բնակիչները՝ 13, 3 մ², իսկ գյուղականինը՝ 14,3 մ²։ Բնակարանային շինարարության աճի մակարդակով և տեմպով երկրում առաջին տեղերից մեկը գրավելով հանդերձ, մեր հանրապետությունը բնակարանային ապահովվածության միութենական միջին մակարդակից ետ է մնում շուրջ 10%-ով և միութենական հանրապետությունների մեջ գրավում է 10-րդ տեղը⁸, Չնայած վերջին երեք հնգամյակի և 11-րդ հնգամյակի առաջին երկու տարվա ընթացքում հանրապետությունում բնակարանային ապահովվածության միջին մակարդակը բարձրացավ և 1982 թ. վերջին հասավ շուրջ 12,8 մ² ընդհանուր տարածության, ընդ որում քաղաքային բնակիչների ապահովվածությունը 12,5, իսկ գյուղական բնակիչներինը՝ 13,7 մ² է⁹, սակայն առաջիկա տասնամյակում վերը նշված միութենական և հանրապետական ցուցանիշները համապատասխանեցնելու խնդիրը Հայկական ՍՍՀ-ում բուռն ուրբանիզացման պայմաններում ձեռք է բերում առանձնահատուկ հրատապություն (տե՛ս աղյուսակ № 3-ը և դիագրամը)։

⁵ Հաշվարկված է «Народное хозяйство СССР в 1980 г.» ժողովածուի 392-րդ էջի տրվյալների հիման վրա։

⁶ «Жилищное и коммунальное хозяйство», 1983, № 1, с. 37.

⁷ Նույն տեղում։

⁸ Հաշվարկված է «Народное хозяйство СССР в 1980 г.» ժողովածուի 392—393-րդ էջերի տվյալների հիման վրա։

⁹ Հաշվարկված է «Жилищный фонд Армянской ССР» (Ереван, 1982) ժողովածուի 21-րդ էջի տվյալների հիման վրա։

ՍՄՀՄ և Հայկական ՍՍՀ բնակչության բնակարանային ապահովվածության
միջին մակարդակի աճի դինամիկան 1960—1980 թթ. (մ2)¹⁰

Մեկ շնչին ընկնող տարածություն	ՍՄՀՄ			Հայկական ՍՍՀ			Միութենական ցուցանիշների գերազանցումը ՀՍՀ-ին (%-ներով)
ցուցանիշներ	1960 թ.	1970 թ.	1980 թ.	1960 թ.	1970 թ.	1980 թ.	1980 թ.
ընդհանուր տարածություն	8,9	11	13,07	7,9	9,6	12	8,7
բնակելի տարածություն	6,1	7,6	11	5,6	6,7	10	10,2

Վերջին ժամանակներս ՍՄԿԿ և Հայաստանի կոմկուսի կենտկոմների ուղղորդությունը սկսելով է բնակարանային պրոբլեմի լուծմանն ուղղված միջոցառումների մշակման և դրանց կատարումն ապահովելու հարցին: ՍՄՀՄ տրնտեսական ու սոցիալական զարգացման 1982 թ. պետական պլանի կատարման արդյունքների մասին ՍՄՀՄ կենտվիճվարչության¹¹ և Հայկական ՍՍՀ տնտեսական ու սոցիալական զարգացման արդյունքների մասին հանրապետության կենտվիճվարչության¹² հաղորդագրությունների համաձայն ամբողջ երկրում և մեր հանրապետությունում 1982 թվականին հանրային արտադրության և ժողովրդի բարեկեցության աճի հիմնական և տվյալ դեպքում մեղ հետաքրքրող ցուցանիշները բնութագրվում են հետևյալ տվյալներով.

Ժողովրդի բարեկեցության բնութագրող ամփոփ վիճակագրական ցուցանիշներ	1982 թ. %-ներով 1981 թ. համեմատում թյամբ	
	ՍՄՀՄ	Հայկական ՍՍՀ
ուղևորման և կուտակման համար օգտագործված ազգային եկամուտը	102,6	103,5
հիմնական ֆոնդերի գործարկումը	105	85
կապիտալ ներդրումները	102	102
բանվորների և ծառայողների թիվը	101,1	101,8
աշխատանքի արտադրողականությունը շինարարության մեջ	102	102,8
բնակելի տների ընդհանուր մակերեսի գործարկումը	109,5	88,4


Ինչպես տեսնում ենք № 4 աղյուսակից, 1982 թ., նախորդ տարվա համեմատությամբ, բնակելի տների ընդհանուր մակերեսի գործարկման համեմատաբար միութենական ցուցանիշը 0,5% է և եթե համեմատենք աղյուսակի՝ ՍՄՀՄ-ին վերաբերող սյունակի մնացած ցուցանիշների հետ՝ փոքրագույնն է: Ինչ վերաբերում է Հայկական ՍՍՀ-ին, ապա այստեղ այդ ցուցանիշի աճը չի հասնում 100%-ի, այսինքն նախորդ՝ 1981 թ. համեմատությամբ բնակելի տների ընդ-

¹⁰ № 3 աղյուսակը և դիագրամը կազմվել են վերոբերյալ վիճակագրական ժողովածուների նշված էջերի տվյալների հիման վրա:

¹¹ «Սովետական Հայաստան», 23. I. 1983,

¹² Նույն տեղում, 30. I. 1983:

Համուր մակերեսի գործարկման ծավալը նվազել է (11,6%-ով)։ Հատկանշական է, որ հանրապետությունում նախորդ տարվա համեմատությամբ նվազել է նաև հիմնական ֆոնդերի գործարկման ծավալի ցուցանիշը (15%-ով)։ Վերոհիշյալ հաղորդագրությունների մեջ նշված է, որ բնակելի տների շինարարության գործարկման պլանն ամբողջությամբ վերցրած երկրում, ինչպես նաև առանձին մինիստրությունների և գերատեսչությունների կողմից թերակատարվել է (նույնը վերաբերում է նաև Հայկական ՍՍՀ-ին) տարեկան պլանի փաստացի կատարողականի առումով։



Բնակարանային ապահովվածության միջին մակարդակի դինամիկան ՍՍՀՄ-ում (հոծ գծով՝ ընդհանուր մակերեսը, ընդհատված խոշոր գծերով՝ բնակելի մակերեսը) և Հայկական ՍՍՀ-ում (կենտադծով՝ ընդհանուր մակերեսը, ընդհատված մանր գծերով՝ բնակելի մակերեսը)

Հայկական ՍՍՀ-ում բնակարանային շինարարության և բնակելի շենքերի ժամանակին գործարկման պլանները սխտեմատիկաբար թերակատարվում են սկսած 9-րդ հնգամյակից։ Եթե 1971—1981 թթ. հանրապետությունում կառուցվել և գործարկվել են 13.114 հազար մ² տարածությամբ բնակելի տներ¹³, որը կազմում է ժամանակաշրջանը եզրափակող 1981 թ. առկա ամբողջ բնակարանային ֆոնդի 32,2%-ը, ապա նույն թվականներին նախատեսված պլաններից բնակչությանը պակաս է տրվել 1270 հազար մ² բնակտարածություն¹⁴ կամ նախատեսվածի 9,6%-ի չափով։ Պարզ հաշվարկի միջոցով փորձենք ստանալ այն ցուցանիշը, որին հասած կլինե՞ր հանրապետությունը վերջին երկու հնգամյակների և 11-րդ հնգամյակի երկու տարվա բնակարանային շինարար-

¹³ Նույն տեղում, 5. XII. 1982:

¹⁴ Նույն տեղում:

րության և դործարկման պլանների կատարման ղեկավարում։ Առ 1982 թ. հունվարի 1-ը հանրապետության բնակարանային ֆոնդը կազմում էր 40448,1 հազար մ² ընդհանուր տարածություն¹⁵։ Եթե դրան ավելացնենք 9-րդ և 10-րդ հնգամյակում ու 11-րդ հնգամյակի առաջին երկու տարում շփոթարկված ընդհանուր տարածությունը, արդյունքում կստանանք շուրջ 42500 հազար մ² ընդհանուր տարածությամբ բնակարանային ֆոնդ, որի առկայության պայմաններում հնարավորություն կընձեռվեր արդեն այս տարվա սկզբին հանրապետության բնակչության բնակարանային միջին ապահովվածությունը հասցնել մոտ 13,2 մ² ընդհանուր տարածության՝ փաստացի 12, 8 մ²-ի փոխարեն։

Հայկական ՍՍՀ-ում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության ծավալի գերակշռող մասը՝ շուրջ 75% -ը, բաժին է ընկնում քաղաքներին և քաղաքային բնակավայրերին, որոնցում բնակարանային ապահովվածության ցուցանիշի (12,5 մ²) և միութենական միջին նույնանուն ցուցանիշի (13,3 մ²) տարբերությունը (0,8 մ²) ավելի մեծ է, քան հանրապետության գյուղական բնակչության բնակարանային ապահովվածության ցուցանիշի (13,7 մ²) և միութենական նույնանուն ցուցանիշի տարբերությունը (0,6 մ²)։ Եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, որ հանրապետության քաղաքային բնակարանային ֆոնդի հավելվածը հիմնականում (շուրջ 90%-ով) իրագործվում է նոր շինարարության հաշվին, այսինքն կրդառնա, որ վերջին երկու հնգամյակների ընթացքում տեղ գտած և ընթացիկ հնգամյակում շարունակվող բնակարանային շինարարության ու բնակելի շենքերի գործարկման պլանների սխտեմատիկ թերակատարումն առավել մեծ չափով անդրադառնում է հանրապետության քաղաքային ընտանիքների բնակարանային բարեկեցության և ապահովվածության վրա։

1970-ական թվականներին միութենական միջին մակարդակի համեմատությամբ Հայկական ՍՍՀ բնակչության աճի տարեկան միջին բարձր տեմպը (2,1%)¹⁶ ոչ միայն հանրապետության բնակչության առավել արագ բնական աճի արդյունք էր, այլ նաև միջհանրապետական միգրացիայի դրական հաշվեմնացորդի հետևանք։ 1970—1979 թթ. բնակչության աճի 20%-ը կապված է եղել Միության այլ հանրապետություններից մարդկանց Հայաստան փոխադրվելու հետ։ Տարեկան միջին բացարձակ մեխանիկական աճը կազմել է մոտ 12 հազար մարդ (հիմնականում 16—30 տարեկան)¹⁷։ Միգրանտների միջին տարիքից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ նրանք էլ իրենց հերթին բարձրացրել են հանրապետությունում արդյունաբերական արտադրության աճի և դեպի նոր ու զարգացող կենտրոններ բնակչության հոսքի հետևանքով քաղաքային բնակչության, մասնավորապես՝ բանվորների և ծառայողների հավելվածի տեմպը և ավելի բարձրացրել այդ հավելվածը մոտ հեռանկարում բնակելի տարածությամբ ապահովելու պրոբլեմը։

Հայկական ՍՍՀ պետականի տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտի ժողովրդագրական սեկտորում կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ հանրապետության ինչպես քաղաքային, այնպես էլ ամբողջ բնակչության աճի մեջ միգրացիայի գործոնի նշանակությունը գնալով փոքրանում է¹⁸։ Այնուհանդերձ, 1970—1982 թթ. ընթացքում հանրապետությունում քաղաքային բնակչության բնակարանային ապահովվածության ցուցանիշը անշեղորեն աճել է՝ 11,6 մ²-ից հասնելով 12,5 մ²-ի և առայժմ մնում է նույն մակարդակի վրա։ Հանրապետությունում ...ֆինանսավորման բոլոր աղբյուրներով 1982 թ. շահագործման է հանձնվել 1 մլն. 185 հազ. մ² ընդհանուր բնակելի տարածություն, որի շնորհիվ նոր բնակարաններով իրենց բնակարանային պայմանները բարելավել են 100 հազ. մարդ։ ...1983 թ. կառուցվե-

15 «Жилищный фонд Армянской ССР», с. 21.

16 «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1982, № 12, էջ 11։

17 Նույն տեղում։

18 «Схема развития производительных сил Армянской ССР в 1986—2000 гг.», 1, Ереван, 1983, с. 3.

լու և 1 մլն. 163 հազ. մ² ընդհանուր տարածությամբ բնակելի շենքերու Դա հնարավորություն կտա բարելավել ավելի քան 95 հազ. մարդու բնակարանային պայմանները և մեկ քաղաքային բնակչի միջին ապահովվածությունը բնակելի տարածությամբ հասցնել 12,3 մ²»¹⁹, Հետևաբար, հանրապետության քաղաքային բնակչության բնակարանային միջին ապահովվածության ցուցանիշն իջնում է և սույն միտումի պահպանման դեպքում, ըստ նախնական կանխատեսության²⁰, հնգամյակի վերջում կկազմի 12,4 մ²:

Քանի որ հանրապետության քաղաքային բնակարանային ֆոնդի հավելածը հիմնականում իրագործվում է նոր շինարարության հաշվին, վերջինիս պլանավորումը և իրագործումը պետք է ենթակա լինի գլխավոր խնդրին, այն է՝ հանրապետությունում արտադրական և սոցիալական ինֆրակառուցվածքի հետագա կատարելագործմանը, որը հնարավորություն կտա լուծելու հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլում խիստ հրատապ դարձած և բնակարանային պրոբլեմի լուծման հետ սերտորեն առնչվող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ա) տարաբնակեցման ռեգիոնալ համակարգի ռացիոնալ ձևավորման, բ) ուրբանիզացման պրոցեսի կառավարման, գ) մեծ քաղաքների աճի սահմանափակման, դ) հանրապետության լեռնային շրջանների, փոքր և միջին քաղաքների տնտեսական բազայի ընդլայնման և օտարածքային պլանավորման այլ խնդիրներ:

Ինչպես նշվեց հանրապետության կուսակցական ակադիվի 1983 թ. մարտի 24-ին կայացած ժողովում, «Մեզ համար այսօր ևս հրատապ պրոբլեմ է հանրապետության լեռնային և նախալեռնային շրջանների, փոքր ու միջին քաղաքների տնտեսական և սոցիալական արագ զարգացումը, դրանցում միգրացիոն պրոցեսների կանխումը, բնակչության աճի ապահովումը... Նշված հարցերը պետք է իրենց արտահայտությունը գտնեն հանրապետության պետականի կողմից մշակվող արտադրողական ուժերի տեղաբաշխման մինչև 2005 թվականն ընկած ժամանակաշրջանի սխեմայում»²¹: Հարկ է, որ այդ սխեմայում արժարժվեն բնակչության հեռանկարային տարաբնակեցման և ժողովրդագրական կազմի վերլուծության հիման վրա բնակարանային շինարարության ռացիոնալ, գիտականորեն հիմնավորված սեղանաշխման և կառուցվածքի կատարելագործման հարցերը, քանի որ վերջիններս բնակարանային շինարարության մեջ կապիտալ ներդրումների օգտագործման արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններն են:

Բնակարանային ապահովվածության ներկայիս իրավիճակը բնութագրող տվյալները ցույց են տալիս, որ հանրապետության, հատկապես քաղաքների և քաղաքային բնակավայրերի բնակչության բնակարանային ապահովվածության միջին մակարդակն աճում է նախ և առաջ Նրևանի, Լենինականի ու Կիրովականի հաշվին: Դրանցում կենտրոնացված է քաղաքային բնակչության 68,5 և քաղաքային բնակարանային ֆոնդի 62,4% -ը, ընդհանուր բնակարանային ապահովվածության մակարդակն այդ քաղաքներում 1982 թ. սկզբին համապատասխանաբար կազմում էր 11,6, 10,0 և 10,9 մ² ընդհանուր տարածություն²², այսինքն՝ դեռևս փոքր-ինչ զիջում էր հանրապետության միջին քաղաքային ցուցանիշին (12,5 մ²)²³, Նժն 1975 թ. բնակելի տարածությամբ քաղաքային բնակչի միջին ապահովվածությունը 7,8 մ² էր և կազմում էր բնակելի տարածությամբ ապահովվածության սանիտարական նորմայի (9 մ²) 86% -ը, ապա 1982 թ. սկզբին 8,1 մ² էր (նույն նորմայի 90% -ը)²⁴: Սակայն այս ցուցանիշները միայն մասնակի հնարավորություն են ընձեռում դատելու բնակարանային ֆոնդի կամ բնակարանային ապահովվածության միջին մա-

¹⁹ «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1983, № 1, էջ 18—26:

²⁰ «Схема развития производительных сил Арм ССР в 1986—2000 гг.», I, с. 53.

²¹ «Սովետական Հայաստան», 25. III. 1983:

²² «Жилищный фонд Армянской ССР», с. 121.

²³ Նույն տեղում, էջ 8:

²⁴ Նույն տեղում:

կարողակի աճի տեմպերի մասին: Բնակարանային պրոբլեմի լուծման ուղղված միջոցառումների պլանավորումն ու հետագա իրագործումը պահանջում է նրկատի առնել բնակարանի քանակական և որակական բնութագրումները պայմանավորող բոլոր հանգամանքները, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ, ինժեներական, տեխնոլոգիական, տնտեսագիտական պահանջները, և, իհարկե, ժողովրդագրական գործոնը²⁵: Ինչպես նշվում է ճարտարապետների միջազգային միության սովետական ճարտարապետների ազգային սեկցիայի «Բնակարան» աշխատանքային խմբի քարտուղարության կողմից, «մասսայական բնակարանային շինարարությունը հնարավոր է միայն և միայն սոսանդարտացման լայն կիրառման, տնտեսական և նորմատիվային խիստ պահանջների կատարման, հեղինակավոր և իրավասու կազմակերպությունների կողմից վերահսկվող երկարաժամկետ պլանների առկայության պայմաններում»²⁶: Հանրապետությունում բնակարանային պրոբլեմի լուծման համար մեծ նշանակություն ունի քաղաքային բնակչության բնակարանային ապահովվածության հետևանքարդյունքի պլանավորումը: Դրա հետ կապված առանձնակի կարևորություն են ձեռք բերում բնակարանային շինարարության համալիր ծրագրով նախատեսված քանակական ու որակական տեսանկյունները որոշակիացնող գիտականորեն հիմնավորված սկզբունքների մշակման հարցերը: Քաղաքային մեկ բնակչին ընկնող բնակելի տարածության չափը կամ հեռանկարում այդ ցուցանիշի աճի տեմպի համադրումը գիտականորեն հիմնավորված նորմատիվների հետ ելակետային հիմք են հանրապետության բնակչության բնակարանային ապահովվածության մակարդակի գիտական կանխատեսման համար ընդհանրապես, և քաղաքային բնակչության համար՝ մասնավորապես: Հարկ է նաև նկատի ունենալ, որ ապահովվածության սանիտարական նորմայի բնագիծը, որը շուտով կնվաճվի հանրապետությունում, ընտանիքի բնակարանային պահանջմունքի բավարարման նվազագույն պայմանն է: Դրություն ունի նաև ընտանիքի բնակարանային ապահովվածության գիտական նորմա, ըստ որի մեկ ընտանիքի բնակչության համար նախատեսված բնակարանը կամ «բնակելի բլոկը» պետք է քաղկացած լինի ընտանիքի յուրաքանչյուր անգամի անհատական սենյակից և մեկ ընդհանուր սենյակից: Հարկ է հաշվի նստել նաև այն պահանջների հետ, որոնք առաջ կբաշխեն գիտատեխնիկական առաջընթացի և ուրբանիզացման հետևանքով, ինչպես և նկատի առնել, թե որ ուղղությամբ կընթանա բնակարանի ձևի և բովանդակության վերաբերյալ պատկերացումների փոխակերպությունը: Հայտնի է, որ «մարդկանց կենսապայմաններն արագ են փոխվում, նույնքան արագ էլ փոխվում են նրանց պահանջմունքները, սովորույթները և ճաշակը, սրանց հետ մեկտեղ՝ նաև «լավ բնակարան» հասկացությունը: Մարդու բնակարանի ստեղծման և ձևափոխման ներկայիս պրոցեսը շատ թեւեռով կապված է աշխարհում տեղի ունեցող ընդհանուր փոխակերպումների հետ, որոնք անմիջական դրոշմ են դնում բնակարանի բնագավառի փոխակերպումների նկարագրին»²⁷:

Այսպիսով, ապագայի բնակարանի նորմատիվային բնութագրերի կանխատեսումների ժամանակ, որոնց նպատակաուղղվածության չափանիշները կաճեն և կփոփոխվեն տեղական պայմաններին ու սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկություններին համապատասխան (սովյալ դեպքում՝ Հայկական ՍՍՀ մասշտաբով), պետք է ելնել ոչ միայն կենցաղային և հիգիենային գիտատեխնիկական առաջընթացի առաջադրած համապատասխան պահանջներից, այլ նաև ուրբանիզացման՝ անհատի վերաբերող տեսանկյունից, որի դեպքում մեծանում է մարդկանց կյանքում բնակարանի սոցիալական նշանակությունը, տեղի է ունենում բնակելի միջավայրի ֆունկցիոնալ բովանդակության ընդլայնում և բարդացում ընդհանրապես:

²⁵ «Демографические проблемы семьи», М., 1978, с. 98.

²⁶ «Современное жилище. Проблема восьмидесятих годов», М., 1975, с. 34.

²⁷ Նույն տեղում, էջ 36:

Ընտանիքն իր անընդհատ աճող պահանջմունքներով բնակարանի (սենս-կելի բլոկի) բնութագրի և ձևի վրա գործումն ազդեցություն ունի, ընդ որում այդ կապը հետադարձ է։ Այդ իսկ պատճառով բնակարանի ձևավորման մեջ մեծ դեր է խաղում ընտանիքը—բնակարան (բնակելի բլոկ)» ճշգրտող հետադարձ կապը, որի ազդեցության առանձնահատկությունները մանրագնին ուսումնասիրության կարիք են զգում հատկապես մասսայական բնակելի կառույցների նոր տիպային նախագծերի մշակման ժամանակ։

Հայկական ՍՍՀ-ում քաղաքային բնակչի բնակարանային պայմանների բարելավման պրոցեսում տեղի է ունենում քաղաքային ընտանիքների ընտանիքայնության գործակցի» (այսինքն՝ ընտանիքի անդամների միջին թվի) փոքրացում, որը հանգեցնում է բնակչության թվի աճի համեմատ ընտանիքների քանակի աճի գերազանցման և լրացուցիչ բնակարանների կառուցման անհրաժեշտության²⁸։ Ապագայում ընտանիքայնության գործակցի» կայունացնող այնպիսի գործոններ, ինչպիսիք են գյուղական բնակչության ներհոսքի հաշվին քաղաքային բնակչության մեխանիկական աճը և այլն, գուցե և որոշ դեր խաղան նշված գործակիցը համեմատաբար բարձր պահելու գործում, սակայն որոշիչ չեն լինի։

Հայկական ՍՍՀ պետականի տնտեսագիտության և պլանավորման պետահետազոտական ինստիտուտի ժողովրդագրության սեկտորում կատարված հաշվարկների համաձայն հանրապետության քաղաքներում ընտանիքների միջին չափը ապագայում կունենա նվազման կայուն միտում և 1979 թ. համեմատ (4,7 մարդ) 1990 թ., հավանաբար, կկազմի 4 մարդ։ Համաձայն նույն ինստիտուտի սպասարկման ոլորտի բաժնի կանխատեսության արդյունքների, Հայկական ՍՍՀ-ում բնակարանային պրոբլեմի լուծումը կիրադրծվի երեք հիմնական փուլով. 1) բնակարանային սուր պահանջի վերացում և ընտանիքների ապահովում բնակարաններով՝ ըստ սանիտարական նորմայի (այսինքն՝ 10—11 մ² բնակելի կամ 13—15 մ² ընդհանուր տարածություն ընտանիքի մեկ անդամին), 2) բնակարանային ապահովվածության ռացիոնալ նորմայի բնագծի նվաճում՝ ամեն ընտանիք առանձին բնակարանով, ընտանիքի չուրաքանչյուր անդամի առանձին սենյակով ապահովում (12—13 մ² բնակելի կամ 18—20 մ² ընդհանուր տարածություն ընտանիքի ամեն անդամին), 3) հիմնական խնդրի իրագործում՝ ըստ գիտական նորմայի հիգիենայի և կենցաղի բոլոր պահանջները բավարարող բնակարաններով ընտանիքների ապահովում (15—16 մ² բնակելի կամ 22—24 մ² ընդհանուր տարածություն ընտանիքի ամեն անդամին)։ Նկատենք, որ երկրորդ փուլով նախատեսված ապահովվածության ռացիոնալ նորմայի (12—13 մ² բնակելի կամ 18—20 մ² ընդհանուր տարածություն ընտանիքի ամեն անդամին) բնագծի նվաճումը հանրապետությանում հնարավոր կլինի 2000 թ. ոչ շուտ (իհարկե, բնակարանային շինարարության և բնակարանային ապահովվածության աճի պլանների կատարման դեպքում)։ Բանն այն է, որ Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման արդի փուլում հանրապետության պետականը որպես բնակարանային ապահովվածության հեռանկարային (մինչև 2000 թ.) շնչալին միջին նորմատիվ հանձնարարել է 17,5 մ² ընդհանուր տարածությունը։ Հեռանկապես, առաջիկա 20 տարում լուծելի է ամեն ընտանիք առանձին բնակարանով և (լավագույն դեպքում) ընտանիքի չուրաքանչյուր անդամի առանձին սենյակով ապահովելու խնդիրը, նշենք, որ սույն հարցադրումը զուտ տեսական բնույթի է։ Ինչ վերաբերում է հիմնական խնդրի՝ այսինքն երրորդ փուլի իրագործմանը, որը ռեալ հնարավորություն կընձեռի իրականացնելու ընտանիքի անդամների տարասենյակ բնակեցում ըստ գիտական նորմայի, համաձայն $z = n + 1$ բանաձևի (Z-ը ընտանիքի զբաղեցրած բնակարանում սենյակների քանակն է, n-ը՝ ընտանիքի անդամների թիվը), ապա այն անորոշ ժամանակով կհետաձգվի։ Ուստի և, 2000 թ. հանրապետությունը դեռ որոշակիորեն հեռու կլինի ըստ գիտական նորմայի հիգիենայի և կենցաղի բոլոր պահանջները բավարա-

²⁸ ՇՀայաստանի ժողովրդական տնտեսություն, 1982, № 9, էջ 27։

րող և անհատի բազմակողմանի ղարգացումը խթանող բնակեցման «կզբունքները կիրառելու հնարավորությունից:

Տվյալ պարագայում բնակարանային ոլորելն մի լուծմանը կարելի է հասնել ամենից առաջ ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին բնակարանային շինարարության մասշտաբների հետևողական ծավալման միջոցով, որի համար ավելի քան կարևոր է բնակարանային շինարարության մեջ կապիտալ ներդրումների օգտագործման արդյունավետության բարձրացումն ու պլանավորված ծավալներով բնակելի տների գործարկումն ապահովող միջոցառումների մշակումն ու իրագործումը: Հանրապետության բոլոր շրջանների և քաղաքների հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման կոմպլեքս ծրագրով նախատեսվող մեծածավալ բնակարանային շինարարության իրագործման և կապիտալ ներդրումների առավել արդյունավետ օգտագործման բարդության գրկալոր պատճառներից մեկը ֆինանսավորման աղբյուրների և պատվիրատու կազմակերպությունների բազմազանությունն է: Ֆինանսավորման աղբյուրները հետևյալներն են՝ ա) պետական կապիտալ ներդրումներ, բ) բնակարանային-շինարարական կոոպերատիվների միջոցներ, գ) բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների սեփական միջոցներ, դ) կոլտնտեսությունների միջոցներ: Հայկական ՍՍՀ-ում բնակարանային շինարարությանը հատկացվող կապիտալ ներդրումների ծավալի 88,6%-ն ընթացիկ հնգամյակում կազմում են պետական կապիտալ ներդրումները և հասարակական կազմակերպությունների միջոցները, որոնք բաշխված են ըստ հիմնական պատվիրատուների, որպիսիք են՝ հանրապետության Մինիստրների խորհուրդը, միութենական-հանրապետական մինիստրությունները և գերատեսչությունները, միութենական ենթակայության ձեռնարկությունները և կազմակերպությունները: Ընդ որում, պետական կապիտալ ներդրումների գերակշռող մասը՝ 53%-ը, հանձնված է հանրապետության Մինիստրների խորհրդին ենթակա գերատեսչությունների և կազմակերպությունների անօրինություններ, Դա, թվում է, պետք է բարերար պայմաններ ստեղծեր հանրապետության պետականի կողմից կապիտալ ներդրումների կենտրոնացված պլանավորման համար: Սակայն հանրապետության պետականը տարածքային կտրվածքով պլանավորում է միայն տնտեսության գծով քաղաքային և շրջանային գործադիր կոմիտեներին փոխանցվող կապիտալ ներդրումները: Իսկ միութենական-հանրապետական մինիստրությունների և միութենական ենթակայության գերատեսչությունների, կազմակերպությունների և ձեռնարկությունների կողմից մասնատիրական մասնակցության կարգով քաղաքային և շրջանային գործկոմներին տրամադրվող միջոցների պլանավորմանը (միջոցներ, որոնք 1983 թ. բնակարանային շինարարության պլանի նախագծի համաձայն հանրապետության Մինիստրների խորհրդի իրավասության կապիտալ ներդրումների 35%-ն են կազմում) հանրապետության պետականը փաստորեն չի մասնակցում: Ֆինանսավորման աղբյուրների նման բազմաքանակ և տարակենտրոն բնույթը բարդացնում է կապիտալ ներդրումների ծավալների տարածքային հաշվեկշռալուծության ապահովումը, հանգեցնում բնակարանային շինարարության անհամամասնական զարգացման, հնարավորություն չի տալիս հարկ եղած չափով հաշվի առնել առանձին քաղաքների և շրջանների զարգացման տնտեսական ու ժողովրդագրական առանձնահատկությունները: Այսինքն, հանրապետությունում առաջացել է բնակարանային շինարարության պլանավորման ճյուղային սկզբունքի գերիշխման փաստացի վիճակ: Ի միջի այլոց, նույնը դիտվում է նաև միութենական այլ մարզային բաժանում լուծեցող հանրապետություններում²⁹: Չնայած պլանավորման ճյուղային սկզբունքն ունի որոշ առավելություններ, տվյալ դեպքում այն խոչընդոտում է հանրապետության շրջանների և քաղաքների ռացիոնալ, պլանաչափ ու նպատակասլաց զարգացմանը:

²⁹ «Жилищное строительство», 1980, № 5, с. 21.

Բնակարանային շինարարության պլանավորման ճյուղային սկզբունքի և շինարարության նորմատիվային ժամկետները չպահպանելու հետևանքով բացասական հետևանքներից է տարվա ընթացքում բնակելի շենքերի գործարկման անհամաչափ պլանավորումն ու դրանով պայմանավորված անավարտ շինարարության մեծ ծավալը (այսինքն՝ տարեցտարի փոխանցվող անավարտ բնակելի շենքերի մեծ քանակը), որը բացասաբար է անդրադառնում շինարարության տեմպերի և որակի վրա: Հանրապետությունում տարիներ շարունակ բնակելի տների շուրջ 40%-ը գործարկվում է չորրորդ եռամսյակում՝ տարվա առավել անբարենպաստ ժամանակաշրջանում, երբ գործնականում խիստ դժվար է որակով կատարել շինմոնտաժային, հարդարման և բարեկարգման աշխատանքները: Տարվա վերջին ամիսներին՝ գորհայնության պայմաններում, բնակելի տները շահագործման են հանձնվում խոշոր թերություններով և շինարարական՝ հատկապես հարդարման աշխատանքների թերի վիճակով, որը դժգոհություն է առաջացնում բնակելի տների բնակեցումը, հանգեցնում աշխատավորների կողմից լրացուցիչ մեծ միջոցների ծախսման: Հայկական ՍՍՀ բնակարանային-կոմունալ տնտեսության մինիստրության տվյալներով 1980—1982 թթ. Կիրովականում գործարկման ընդունված 6, Ղափանում՝ 5, Արարատում, Գորիսում և Իջևանում երկուական շենք բնակեցվել են շահագործման հանձնվելուց 3—8 ամիս հետո³⁰: Շինարարական աշխատանքների ցածրորակության պատճառով 1978—1982 թթ. վիճակագրական հաշվետվությունից հանվել է 30 շենք՝ 130 հազար մ² ընդհանուր տարածությամբ: Հանրապետությունում նկատվում է հարյուրավոր շենքերի վաղաժամ «ծերացում», որը մեծ վնաս է հասցնում պետությանը և անհարմարություններ ստեղծում բնակչության համար³¹:

Վաղուց հասունացել է բնակարանային շինարարության մեջ կապիտալ ներդրումների պլանավորման նոր մեթոդների համալիրի մշակման և ներդրման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա փոխկապակցել տարածքային և ճյուղային պլանները, ինչպես նաև կմեծացնի միութենական հանրապետությունների պետպլանների և այլ պլանային մարմինների դերը կապիտալ ներդրումների լիմիտների բաշխման գործում՝ կապալային կազմակերպությունների հզորություններին և նյութական ռեսուրսների ֆոնդերին համապատասխան:

ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն 1983 թ. փետրվարի 25-ին ընդունած «Բնակելի տների ու սոցիալ-կենցաղային օբյեկտների շինարարության պլաններով կատարումն ապահովելու միջոցառումների մասին» որոշման մեջ, անդրադառնալով պլանավորված ծավալներով բնակելի տների գործարկումն ապահովող միջոցառումներին, նպատակահարմար է գտել 1984 թ. սկսած շինարարական մինիստրությունների համար կապալային աշխատանքների պլաններում սահմանել բնակելի տների շահագործման հանձնելու առաջադրանքները³²: Հայկական ՍՍՀ-ում բնակելի պրոբլեմի հետևանքով չլուծված հարցերի լուծումն արագացնելու նպատակով և ի կատարումն այդ որոշման, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը հանրապետության պետպլանին, պետշինին, բնակարանային-կոմունալ տնտեսության, արդյունաբերական և գյուղական շինարարության մինիստրություններին, միութենական ենթակայության շինարարական տրեստներին ու վարչություններին, պատվիրատու մինիստրություններին, գերատեսչություններին և ձեռնարկություններին, քաղաքային ու շրջանային սովետների գործկոմներին պարտավորեցրեց ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք ապահովեն՝ ա) բնակարանային շինարարության պլանավորման ու կատարման, ինչպես նաև միասնական պատվիրատուների գործունեության կատարելագործումը, բ) բնակելի օբյեկտների գործարկման պլանների կատարումը սահմանված ժամկետներում, գ) բնակելի ֆոնդի անվթա-

30 «Սովետական Հայաստան», 5. XII. 1982:

31 Նույն տեղում:

32 Նույն տեղում:

րայնությունը, դ) բնակելի տների կիրառվող տիպային նախագծերի քանակի մեծացումը և այլն, իսկ ՀԿԿ քաղկոմների և շրջկոմների պարտավորեցրեց բնակարանային-քաղաքացիական օրյեկտների կառուցման ժամկետների վիճեցման յուրաքանչյուր փաստ դիտել որպես կուսակցական և պետական կարգապահության լուրջ խախտում³³;

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПЛАНИРОВАНИЯ ЖИЛИЩНОГО СТРОИТЕЛЬСТВА И ЖИЛИЩНОЙ ОБЕСПЕЧЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ

СУРЕН ВАРДУМЯН

Резюме

Важнейшим условием наиболее полного соответствия объема производства, структуры и все совершенствующихся потребительских качеств жилища возрастающим и изменяющимся потребностям всех слоев населения является учет уровня развития мощностей подрядных строительных организаций и фондов материальных ресурсов, а также демографического фактора, сопровождающегося в Армянской ССР такими качественными изменениями, как увеличение мобильности населения, ускорение распада сложных семей на простые, уменьшение среднего размера семьи.

Выполнение и перевыполнение планов строительства и ввода жилья, а значит и неуклонное повышение жилищной обеспеченности населения республики требуют кардинальных мер по повышению эффективности использования капитальных вложений в жилищное строительство. Сложность этого в определенной степени объясняется многообразием источников финансирования, затрудняющим обеспечение сбалансированности объемов капитальных вложений в территориальном разрезе, так как планирование по определенным источникам является децентрализованным, что приводит к диспропорции в жилищном строительстве, выделению капитальных вложений без должного учета демографии, экономических особенностей развития отдельных городов и районов.

³³ Նույն տեղում, Ե. IV. 1983: